Արևային տաք ջրամատակարարման համակարգի աշխատանքային գծագրերի ամփոփագիր

| Թերթ | Անվանում | Ծանոթագր. |
|---|---|---|
| 1 | Ընդհանուր տվյալներ: Տաք ջրամատակարարման համակարգի մասնագիր | Ա-1 |
| 2 | Տաք ջրամատակարարման համակարգի սխեմա | Ա-2 |

## Ը Ն Դ Հ Ա Ն Ու Ր  Ց Ու Ց Ու Մ Ն Ե Ր

Տավուշի մարզի Նավուր գյուղի մանկապարտեզի տաք ջրամատակարարման համակարգի նախագիծն իրականացված է Հ.Հ. օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, նախագծման նորմերին և կանոններին, ինչպես նաև նախագծային առաջադրանքին համապատասխան:

## ՏԱՔ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Նավուր գյուղի մանկապարտեզը նախատեսված է 75 երեխայի համար: Տաք ջրամատակարարման համակագը նախատեսվում է իրականացնել պանելային արևային մարտկոցներով և էլեկտրականությամբ: Արևային մարտկոցների հետ նախատեսվում է տեղադրել 2հատ ծավալային ջերմափոխանակիչ՝ յուրաքնչյուրը 160լ տարողությամբ:

Տաք ջրամատակարարման համակարգը երկկոնտուրանի է: Առաջին կոնտուրում ջերմակիրը անտիֆրիզն է, որը տաքանալով արևային մարտկոցներում ջերմադիմացկուն խողովակներով տեղափոխվում է դեպի ծավալային ջերմափոխանակիչ, որտեղ տաքացնում է երկրորդ կոնտուրի սառը ջրին, որը տաքանալով գնում է դեպի սպառիչներ:

Նախագծում նախատեսվում է տեղադրել 7հատ՝ յուրաքանչյուրը 2կՎտ հզորությամբ, պանելային արևային մարտկոցներ հետևյալ հաշվարկով:

Օրական ջրի ծախսը 40լիտր 1հոգու համար, որը պետք է տաքացվի 40°C, 75 հոգու համար կլինի 40լ x 40°C x 75 = 120000 կկալ / 860 = 139.5 կՎտ /10 ժամ = 13.95կՎտ ≈ 14.0 կՎտ:

Առաջին կոնտուրի ջերմակիրը գերտաքացումից զերծ պահելու համար նախատեսվում է տեղադրել հոսանքի կարգավորիչ՝ UPS: Համակարգում տեղադրվում է նաև ավտոմատ խառնիչ, որը տաք ջուրը խառնելով սառը ջրի հետ ստանում է համասեռ, միշտ նույն ջերմաստիճանի ջուր:

Ամպամած օրերին, երբ արևային մարտկոցներով հնարավոր չէ իրականացնել տաք ջրամատակարարումը, ավտոմատ միանում է ջերմափոխանակիչի էլեկտրական ջեռոցը:

Հատված երկրորդ հարկի հատակագծից
Մ 1:100




*Արևային տաք ջրամատակարարում*

| NN | Սարքավորումների և նյութերի անվանումը | Տիպը | Չափման միավորը | Քանակը | Միավորի մասսան |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Պանելային արևային մարտկոց 2կՎտ | | հատ | 7 | |
| 2 | Ծավալային ջերմափոխանակիչ V=160լ | | հատ | 2 | |
| 3 | Ընդարձակման անոթ V=50լ | | հատ | 2 | |
| 4 | Ընդարձակման անոթ V=25լ | | հատ | 2 | |
| 5 | Ավտոմատ խառնիչ Ø25 | | հատ | 2 | |
| 6 | Ապահովիչ փական P=6բար | | հատ | 2 | |
| 7 | Ճնշման կարգավորիչ Ø25 | | հատ | 2 | |
| 8 | Շրջանառու պոմպ G=3մ³/ժամ, H=4մ, N=68Վտ | | հատ | 2 | |
| 9 | Շրջանառու պոմպ G=2մ³/ժամ, H=2մ | | հատ | 2 | |
| 10 | Ավտոմատ օդահան կափույր Ø15մմ | | հատ | 2 | |
| 11 | PPR փական Ø25մմ | | հատ | 12 | |
| 12 | PPR փական Ø15մմ | | հատ | 4 | |
| 13 | PPR հետադարձ փական Ø25մմ | | հատ | 2 | |
| 14 | PPR հետադարձ փական Ø15մմ | | հատ | 2 | |
| 15 | PPR դատարկման փական Ø20մմ | | հատ | 2 | |
| 16 | Ջերմամանոմետր | | հատ | 4 | |
| 17 | Պոլիպրոպիլենային խողովակներ d=32x4.4մմ, ներառյալ ձևավոր մասերը | | գծ.մ | 4.0 | |
| 18 | Ջերմադիմացկուն խողովակներ Thermoross d=32մմ, ներառյալ ձևավոր մասերը | | գծ.մ | 56.0 | |
| 19 | UPS 0,8-1,0 կՎտ | | հատ | 2 | |
| 20 | Ռետինե ջերմամեկուսիչ d=32x4.4մմ պոլիպրոպիլենային խողովակները ջերմամեկուսացնելու համար | | գծ.մ | 4.0 | |
| 21 | Ռետինե ջերմամեկուսիչ d=32մմ ջերմադիմացկուն խողովակները ջերմամեկուսացնելու համար | | գծ.մ | 56.0 | |
| 22 | Համակարգի լվացում և փորձարկում | | մ | 60.0 | |
| 23 | Հակասառեցուցիչ հեղուկ (անտիֆրիզ) | | լ | 50.0 | |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1. Պանելային արևային մարտկոցների տեղադրման սխեման տանիքին տե՛ս ՃԼ-19ա,
2. Մարտկոցների հենարանների կոնստրուկտիվ սխեման տե՛ս ԵԿ-24

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ծրագրի առաջադրանք՝ TTV-05 | | | Նավուր գյուղի մանկապարտեզի կառուցում | | | |
| | | | Արևային տաք ջրամատակարարում | ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
| | | | | ԱՆ | Ա-1 | 2 |
| Նախագծ. | Հ. Ղուկասյան | | Ընդհանուր տվյալներ: Տաք ջրամատակարարման համակարգի մասնագիր | ԻՆՋԻՆԻՐԻՆԳ ԷՎՐՈՍ ՍՊԸ / ENGINEERING EVROS LLC | | |
| Պաշտոն | Ազգանուն | Ստորագր. | | | | |